


ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ
ՆԵՐՔՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԹԵՄԱՅԻ


1. Թեմայի վերնագիրը. «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը»
 2. Ծածկագիրը. 01-SCI-2017
 3. Թեմայի իրականացման համար տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր. № ShSU 01-SCI-2017, «01» մարտի 2017 թ.
 4. Հաշվետու ժամանակահատվածը. «01» հունիսի 2017 թ.-ից «31» օգոստոսի 2017 թ.
 5. Կազմակերպության անվանումը, որտեղ իրականացվում է թեման. Շիրակի Մ.Նայրանդյանի անվան պետական համալսարան
 6. Թեմայի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը. Մարտիրոսյան Լ. Մ.
հեռախոսը. 055 77 03 99
Էլեկտրոնային փոստի հասցեն. mlevon2003@mail.ru
 7. Հաշվետու ժամանակահատվածում թեմայի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները. 900 000 ՀՀ դրամ
 8. Թեմայի ղեկավարի ստորագրությունը. 
- «31» օգոստոսի 2017 թ.

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Շիրակի պետական համալսարանի աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնում իրականացվող «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը» գիտահետազոտական թեմայի աշխատանքները երկրորդ եռամսյակում սկսվել են 2017թ. հունիսի 1-ից:

Հաշվետու ժամանակահատվածում, աշխատանքային խմբի կողմից կատարվել է մորֆոմետրիական ցուցանիշների մասնատման խորության և խտության ցուցանիշների վերաբերյալ գրականության ուսումնասիրություն:

Հետազոտվող տարածքի ռելիեֆի մասնատման խորության ռեկրեացիոն գնահատման համար, մեր կողմից կազմվել է 1:100 000 մասշտաբի քարտեզ: Նույն մասշտաբի քարտեզ կազմվել է նաև մասնատման խտության վերաբերյալ (տես զծանկար 1 և 2):




Զծանկար 1 Տարածքի մասնատման խորության քարտեզ-սխեմա:

Ուսումնասիրվող տարածքի մասնատման խորությունների և մասնատման խտությունների ցուցանիշների հաշվարկման և քարտեզագրման նպատակով կիրառվել է ArcGIS 10.2 ծրագրային համակարգը:

Նշված ցուցանիշների հաշվարկման համար որպես հենքային մակերևույթ ծառայել է հետազոտվող տարածքի ռելիեֆի թվային մոդելը 1:100 000 մասշտաբով:

Մասնատման խորությունների քարտեզը: Հանրահայտ է, որ տարածքի մասնատման խորությունը հանդիսանում է ցուցանիշ, որն իրենից ներկայացնում է տարածքի միավոր քառ. կմ մակերեսում ռելիեֆի ամենաբարձր և ամենացածր նիշերի տարբերությունը: ArcGIS 10.2 ծրագրային միջավայրում այդ ցուցանիշի անմիջական հաշվարկման համար բացակայում են համապատասխան գործիքները: Այդ իսկ պատճառով կարիք է առաջացել օգտագործելով առկա գործիքային միջոցները, ի դեմս՝ Zonal Statistics, Math, Conversion, Interpolation գործիքային փաթեթների, ArcGIS ծրագրային միջավայրում մշակել գործողությունների անհրաժեշտ հաջորդականությամբ մոդել, որի ընթացքում իրականացվել են անհրաժեշտ բոլոր հաշվարկները և ստացված արդյունքը ենթարկելով ինտերպոլյացիայի IDW մեթոդով ստացվել է հյուսիսային Հայաստանի (Շիրակ, Լոռի, Տավուշ) տարածքի ռելիեֆի մասնատման խորությունների քարտեզը:

Մասնատման խտությունների քարտեզը: Տարածքի մասնատման խտությունը արտահայտում է միավոր քառ. կմ մակերեսում առկա էրոզիոն ցանցի գումարային երկարության արժեքը: Ցուցանիշի հաշվարկման և քարտեզագրման նպատակով կիրառվել է Spatial Analyst գործիքային փաթեթը: Հիմք ընդունելով ուսումնասիրվող տարածքի ռելիեֆի թվային մոդելը և էրոզիոն ցանցը, հաշվարկվել են մասնատման խտության արժեքները:



Չճանկար 2: Մասնատման խորության քարտեզ-սխեմա

Ծրագրի ընթացքում, անհրաժեշտություն է եղել իրականացնել դաշտային հետազոտական աշխատանքներ: Հաշվի առնելով հետազոտվող տարածքի զբաղեցրած մակերեսը (9166կմ²), մեր կողմից նպատակահարմար է եղել դաշտային աշխատանքները կազմակերպել երեք փորձարարական (պոլիգոնային) տեղամասերում՝ յուրաքանչյուր մարզում մեկ տեղամաս: Ընդ որում, տեղամասերի ընտրությունը պայմանավորված է եղել սվյալ մարզին առավել բնորոշ կառույցների կառույցների ընտրությամբ: Շիրակի մարզում ընտրվել է հրաբխային կառույցի մի տեղամաս, Լոռիում և Տավուշում ծալքավոր և ծալքաբեկորային կառույցներ: Տեղամասերի զբաղեցրած մակերեսը մոտավորապես հավասար է՝ 1կմ²:

Յուրաքանչյուր տեղամասում կատարվել են հետազոտական աշխատանքներ (ապարների կազմ, շերտագրություն, հովիտների ձև, հողաբուսական ծածկույթ):

Ստացված արդյունքների հիման վրա հետազոտում կկազմվի Հյուսիսային Հայաստանի զբոսաշրջային քարտեզը, ինչը ցույց կտա գեոտուրիզմի հնարավորությունները այս տարածաշրջանում:

Լեռնային զբոսաշրջությունը հանդիսանում է Հյուսիսային Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը, ուստի ռելիեֆի մորֆոմետրիկական ցուցանիշները ընդհանրապես, իսկ մասնատման խորությունը և խտություն մասնավորապես ունեն կարևոր նշանակություն զբոսաշրջային ամենատարբեր ճյուղերի, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման համար:

Ռելիեֆի մորֆոմետրիկական ցուցանիշների գնահատման և քարտեզագրման գործնական նշանակություններից մեկն էլ տարածքի անցանելիության բացահայտումն է: Ներկայումս այս հարցն ունի կարևոր նշանակություն զբոսաշրջության համար: Անցանելիության գնահատականը բացահայտում է տարածքի տրանսպորտային յուրացման հնարավորությունները: Սա հատկապես կարևորվում է զբոսաշրջային այն երթուղիների համար, որոնք անցկացվում են տրանսպորտային միջոցներով: Անցանելիությունը կարևոր է նաև ջիփինգ տուրերի կազմակերպման համար:

Մորֆոմետրիկական երկու ցուցանիշների վերլուծությունը պատկերացում է տալիս նաև հետիոտն անցանելիության մասին: Հայաստանում և մասնավորապես Հյուսիսային Հայաստանում, գնալով մեծ տարածում են գտնում հետիոտն արշավները,

լեռնագնացությունը, ինչպես նաև էկոտուրիզմը, ինչի համար ռելիեֆի խորքային և հորիզոնական մասնատվածությունը կարևոր հասնգամանք է:

Տեղանքի անցանելիության ուսումնասիրությունը կավարտվի հետազոտողական աշխատանքների հաջորդ փուլում:

Կատարված հետազոտողական աշխատանքները ամփոփվել են գիտական հոդվածում, որը հանձնվել է Շիրակի պետական համալսարանի գիտական տեղեկագրին հրապարակման համար:

ՕԳՏԱԳՈՂԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Балян С.П.** Структурная геоморфология Армянского нагорья и околмляющих областей – Ереван: Изд. ЕГУ, 1969, 390 с.,
2. **Балян С.П.** Морфологический анализ строения Армянского нагорья //Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1965, N3-4, с. 75-94.
3. **Бредихин А.В.** Рельеф как условие и ресурс рекреационной деятельности. Вестн. МГУ, сер. 5, география, 2003, №1, с. 58-59.
4. **Геворгян Ф.С.** Морфометрия речных бассейнов и режим поверхностного стока на примере бассейна р. Арпа // Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1969, N3, с. 50-58,
5. **Геворгян Ф.С.** Морфометрический анализ в бассейне р. Гетик с целью выявления неотектонических движений и морфоструктур // Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1969, N4, с. 98-99,
6. **Геворгян Ф.С., Погосян Д.А.** О некоторых результатах морфометрического картирования территории Армянской ССР //Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1970, N4, с. 16-24,
7. **Зограбян Л.Н.** Связь орографической расчлененности гор с морфоструктурой// Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1972, N5, с. 82-90,
8. **Симонов Ю.Г.** Морфометрический анализ рельефа. – Смоленск: Изд. СмолГУ, 1998, 272 с.,
9. **Симонов Ю.Г.** Объяснительная морфометрия рельефа. – М.: ГЗОС, 1999, 263 с.,
10. **Философов В.П.** Основы морфометрического метода поисков тектонических структур. - Саратов: Изд. Саратовского ун.-та, 1975, 232 с.
11. **Егорина А.В., Логиновская А.Н.** Рельеф как фактор рекреационной деятельности (на примере Восточного Казахстана). Барнаул, 2013г., с. 47-50.
12. **Павлова А. И.** Морфометрический анализ рельефа с помощью ГИС. Новосибирск, 2013г.
13. **Погосян Д.А.** Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Арм. ССР. Изд.АН Арм ССР. Е. 1986, с. 221.
14. **Մարտիրոսյան Լ.Ս.** Շիրակի մարզի գյուղատնտեսության աշխարհագրություն, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. Ե. 2000թ. 139 էջ:
15. **Թադևոսյան Գ.Պ.** Լոռու գրասաշրջային ռեսուրսները, «ՄԻՄ տպագրատուն», Վանաձոր, 2015, 256 էջ:
16. **Антипцева Ю.О., Думит Ж. А.** Морфометрический анализ рельефа с использованием ГИС технологий при оценке рекреационного потенциала Лагонакского нагорья (северо-западный Кавказ). Геоморфология, 2009, № 1, с.45-50.
17. **Анисимова В. И.** Основы морфометрического анализа рельефа. Грозный, 1987, 91 с.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ


h/h	Անվանումը	Ֆինանսավորման ծավալը (ՀՀ դրամ)
1	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ եկամտային հարկը	900 000
2	Այլ ծախսեր, այդ թվում՝	-
	սարքեր և նյութեր	-
	գործուղումներ	-
Ընդամենը՝		900 000

Թեմայի ղեկավար՝


(ստորագրություն)

Մարտիրոսյան Լ. Ս.
(Ս.Ս.Հ.)

ՇՊՀ գլխավոր հաշվապահ՝


(ստորագրություն)

Ռաֆֆի Քալաջյան
(Ս.Ս.Հ.)

«31» օգոստոսի 2017 թ.

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՂ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ


1. Աշխատանքի վարձատրության հողվածով 900 000 ՀՀ դրամը՝ ներառյալ
եկամտային հարկը, ստացվել են թեմայում ընդգրկված աշխատակիցների կողմից՝
ըստ իրենց հաստիքային աշխատավարձերի:

2. Սարքեր և նյութեր՝ 0 դրամ:

3. Գործուղումներ՝ 0 դրամ:

Թեմայի ղեկավար՝

ստորագրություն



«31» օգոստոսի 2017 թ.